

լուն Լեւոն Կաստիլյայի թագաւորին հեծեալներուն հետ միացած՝ կշտապէր հասնիլ որոշուած օրը. բայց չորս օր ուշացաւ, եւ հազիւ մայիսի 16-ին հասաւ Բաղախողի սահմանները : Յովհաննէս լսելով Լեւոնի մօտենալը՝ շուտ մը պատրաստուեցաւ եւ քաղաքէն դուրս մէկ փարսախ ճամբայ ընդ առաջ գնաց Լեւոնը զիմաւորելու համար : Թագաւորին կընկերանային պապին կարգինալ նուիրակը, բազմաթիւ արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ, նաւարրայի թագաւորազուն իշխանն եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ : Լեւոն երբ տեսաւ արքայական թափօրին իր կողմ գալը՝ քովիններուն հարցոց թէ ո՞րն է թագաւորը, անոնք ալ ցոյց տուին Յովհաննէս Ա-ը, որ Հայոց թագաւորը պատուելու համար թուրը բարձր բռնած կառաջնորդէր անագին թափօրը : Լեւոն զղածուած՝ անմիջապէս վար ցատքեց իր ջորիէն, ծնրադրեց գետինը, եւ իր գլխարկն ու փակեղն հանեց(1), ինչան խոնարհութեան եւ երախտագիտութեան : Յովհաննէս՝ ինչպէս նաեւ իր հեռեւորդները՝ Լեւոնի այս ցոյցին վրայ վայրկենապէս վար իջան իրենց ջորիներէն, եւ թագաւորը գնաց վեր վերցոց Լեւոնը, որ հետեւեալ բռնեցով յայտնեց իր զգացումները. «Տէ՛ր, ե՛ս եմ պարտաւոր Ձեր Արքայական Վեհափառութեան առջեւ մեծարանք ընելու . վասն զի Ձե՛զ եւ Ձեր բարութեան է որ կը պարտիմ ազատութիւնս այն խիտ եւ դժնդակ բանտէն՝ որուն մէջ կը զըտնուէի(2)» : Այս խօսքին վրայ Յովհաննէս զրկեց համբուրեց Լեւոնն եւ բարիգալուստ մաղթեց՝ ջանալով ամօքիլ զժրախա Լեւոնի ցաւերը : Իսկ Յովհաննէսի կողմէ Լեւոնի փրկութեան համար Կահիրէ գացող եւ Լեւոնն ազատելով անոր ընկերակցութեամբ վերագարձող պատգամաւորները՝ Եղիպտոսի սուլտանին եւ Բարկուկ ամիրային հետեւեալ երկու պատասխանագրերն յանձնեցին Կաստիլյայի թագաւորին(3) :

(1) Սպաներէն բնագիրն է՝ « é tirose el sombrero é el capirote de la cabeza. » (*Cronicas de los reyes de Castilla*, հս. Բ, եր. 168) : Ես այստեղ բնագրին հաւասարիմ մնալու համար « փակեղ » բարգմանեցի սպաներէն capirote բառը, որ կը նշանակէ տեսակ մը պոչաւոր կնգուղ, որ միջին դարու մէջ գլխարկի տեղ կը ծառայէր : Բուն բառը պիտի ըլլայ « փարքոց » = բր. սարք, չարնա, ինչ որ կը տեսնուի Լեւոնի պատկերին մէջ, տե՛ս գրքիս եր. 37 : Աւելի ընդարձակ տեղեկութեան համար դիմեղ գրքիս գլ. ԻԷ :

(2) *Cron. rey. Cast*, հս. Բ, եր. 168 : Այստեղ « բանս » բառով պէտք է հասկնալ անուտ « բերդարգելութիւն », քանի որ տեսնուի (եր. 58, ծան. 2) թէ Լեւոն բանսի մէջ չէր այլ գերութեան եւ բերդարգելութեան մէջ :

(3) Չարմանալի է, որ Կաստիլյայի թագաւորին կողմէ Եղիպտոսի սուլտան-